

խրացնել (УХВАТИТИ) այդ ժամանակամիջոցի մասերը, այնուհետև վերադարձնել դոցա յիշողութեան մէջ, որովհետև եթէ իւրաքանչիւր քայլափոխում՝ մտանամ նախկին իւրացրածներս, այդ դէպքում չեմ ունենայ ամբողջի պատկերացում. վերջապէս՝ երրորդ դիտակցել վերջին անգամ, որ դրանք նոյն նախկին ըմբռնութիւններն են, ինչ որ մենք իւրացրինք: Առանց սենթէզի այս երեք մոմենտի հնարաւոր չէ թէ իրի պատկերացումը, և թէ մինչև անգամ ամենահիմնական եզական *a priori* պատկերացումները՝ ժամանակն ու տարածութիւնը:

(շարունակելի)

Յ. Յ.

ՊԵՂՈՒՄՆԵՐ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ

«Россія» ում, № 1679, հարդում ենք.

«XX դարը, ասում է Temps, հարստացել է հնախոսական դանազան դիւտերով: Նամպուխան, Նեմիւդա, Բելլերոֆ, Օպպերա և նրանց դործակիցները պատուեցին Նդիպտոսի, Չինաստանի, Հնդկաստանի, Պարսկաստանի և Ասորեստանի դադանիւրը: Հասաւ հերթը Միջին Ասիային: Պամիրից դէպ ի արևելք, Հնդկաստանի, Ռուսաստանի և Չինաստանի միջև եղած ընդարձակ տարածութիւնը բաժանուած է երկու մասնի, դէպ ի հարաւ՝ Տիբեթի բարձր սարահարթը, դէպ ի հիւսիս՝ չինական Փուրքեստանի աւաղոտ անապատը:

Տիբեթում իշխում է բուդդայականութիւնը, Փուրքեստանը պատկանում է մահմետականութեան, բայց մինչև այդ դաւանութիւնը, այնտեղ շատ դարերի ընթացքում ծաղկում էր Բուդդայի վարդապետութիւնը: Քրիստոսի ժամանակ այս երկրով երկու ճանապարհ էր հարթուած, և վաճառականները, և միսիօններները, և ուխտաւորները դանազան հողմերից խմբւում էին այնտեղ: Այժմ՝ ամայութիւն է այդ տեղ, ուր երբեմն՝ բարդաւաճումն էր, որի մասին տեղեկութիւն կայ միայն չինական ընագիրներէից (տեկստ):

Բայց մօտիկ ժամանակներումս կատարուեցին այնպիսի դիւտեր, որոնք ընդհանուր ուշադրութիւն են դրաւել: Հետազօտողները Սվեն Խեդինի առաջնորդութեամբ դտան Միջին

Ասիայի Պամպէի աւազներում ծածկուած ամբողջ յիշատակա-
րաններ, այբեր հնդկական նկարչութեամբ և հնդկաց լեզու-
ներով արձանագրութիւններ: Մի անգլիացի սպայ Աուչաում
պատահաբար ձեռք բերեց մի կապոց իրան անյայտ գրութիւն-
ներով: Կարգացին նրանց, և պատահաբար դնածը դուրս եկաւ
բժշկական կանոններ սանսկրիտ լեզուով, որ Հնդկաստանի
բոլոր ձեռագրերից աւելի հին է: Դիւտրէյն ու Գրենարը Խո-
տանից ուղարկեցին ուրիշ թերթեր, որոնց նրանք չէին կա-
րողացել տեղումը կարդալ, և երևաց, որ դրանք աւելի հին
ձեռագիր են, գրուած 1500—1800 տարի մեղանից առաջ,
բոլորովին մոռացուած տառերով, բոլորովին կորած լեզուով:

1900 թ. Շոէյնը պաշտօնական յանձնարարութիւն սաա-
ցաւ Անգլո-Հնդկական կառավարութիւնից: Նա այդ բանին
նախապատրաստուած էր Աֆգանական սահմանի վերայ 15-
ամեայ ջանքերով: Նրա յաջողութիւնը գերազանցեց բոլոր
ակնկալութիւններին: Խոտանից գէպի արեւելք մի վայրում
կարճ ժամանակ կենալով, այնտեղից դուրս բերեց դարմանալի
իրեր, այն է սանսկրիտ, չինական, և տիբեթական լեզուներով
ձեռագրեր, արձաններ, անօթներ, գործուածքներ: Պատմա-
բանները յուզուեցին. Շոէյնի գիւտերը, որոնք գրուած են
ընդամենական թանգարանում, հրապուրում են յաճախորդնե-
րի բաղմութիւն: Նրանք վերահենդանացրին հին քաղաքակը-
թութիւնը, որի վերայ գրել էին իրանց կնիքը Հնդկաստանը,
Չինաստանը, Պարսկաստանը, Վելլական, Բուդդան և Քրիս-
տոս: Այդ գիւտերը բերին այն եզրակացութեան, որ Գեր-
մանիան մեծ ծախսերով կազմեց մի գիտական արշաւա-
խումբ, որը պէտք է հետազօտէր Աուչայի և Տուրաֆնի միջև
հին ճանապարհը գէպի հիւսիս: Բռնմներն էլ ուղարկեցին
իրանց արշաւախումբը: Անգլո-Հնդկական կառավարութիւնը
յանձնարարեց Շոէյնին նորից հետազօտել ամբողջ Թուրքես-
տանը, իսկ Միկադոյի մօտիկ աղդական գրաֆ Օտանին ինքն
դնաց հետազօտողների մի խմբով: Ֆրանսիան էլ վճռեց յետ-
ջմնալ և ֆրանսիական ինստիտուտը, կառավարութիւնն ու
գիտնական ընկերութիւնները այս նպատակով միացան և
միաձայն ընտրեցին Պելլիօ-ին: Շնայելով, որ Շոէյն-ը արդէն
գրաւել էր ամենահետաքրքրական վայրը և երկրի հիւսիսա-
յին կողմում արդէն երեք տարուց հետէ աշխատում էր
գերմանական արշաւախումբը, չնայելով ռուս հետազօտող-
ների գրուած գիրքերին, և գրաֆ Օտանի փոխանորդ Տաշի-
բանի աշխատանքներին, Պելլիօ-ն էլ բաղդաւոր գանուեց
իւր որոնումների մէջ. անապատ ճանապարհի վերայ, որ

գտնուում է 2000 վերստ հեռավորութեամբ Վաշկարի և իսկապէս Զինատանի միջև: Վաշկարում Պելլիօ-ն յայտնագործեց մի տաճար քաղմաթիւ ձեռագործներով, որոնք միաժամանակ արտայայտում էին յունական գեղարուեստը և հնդկական երևակայութիւնը: Գուգդուր-Ակուրում նա դտաւ այրուած շինութեան աւերակների տակ հարուստ մատենագարանի հետքեր: Վերջապէս անապատի ամենածայրին Տուան-խուան-ի մօտ նա ներս մտաւ մի գաղտնի նկուղ, ուր 12 դարերի ընթացքում հանգստանում էր մատենագարան, որ բոլոր ասիական լեզուներով ձեռագրեր է բովանդակում:

Թարգմ. Յ. Ա. Ե.



Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

Տօնական շաբաթ.—Յունիսի 6-ից սկսուեցին Ս. Հռիփօսիմեանց և Գայիանեանց կոյսերի տօները: Մայր Աթոռիս միաբանութիւնը սովորութեան համեմատ նախատօնակին ուս. պատարագին նեկոյ եղաւ վանքերում: Այս տարի տեղացող անձրևների պատճառով ժողովուրդը սակաւ էր: Ամսիս 11-ին և 12-ին շաբաթ և կիրակէ, «Ս. Լուսաւորչի ելն ի վերապէն» և «Կաթուղիկէ Ս. Էջմիածնի» տօներին հանդիսաւոր ժամերգութիւն և ս. պատարագ մատուցուեցին Մայր Տաճարում, պատարագիչներն էին—շաբաթօրը՝ Մագիստրոս Տ. Մեսրոպ եպիսկոպոս, իսկ կիրակէօրը՝ Կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը: Կատարուեց մաղթանք Մայր Աթոռի հաստատութեան համար: Կային բաւական ուխտաւորներ երևանից և շրջակայ տեղերից:

Դպրոցական հանապարհորդութիւն.—Յունիսի 8-ին եկան Մայր Աթոռս նոր նախիջևանի թեմական դպրոցի 2. դասարանի աշակերտները թուով 24 հոգի իրանց երկու դաստիարակների հետ. դիտեցին Մայր Աթոռի և շրջակայքի կարևոր հաստատութիւններն ու հնութիւնները և վեց օր հիւր մնալով Մայր Աթոռումս՝ յունիսի 13-ին գնացին